ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2026 թվականի №____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №516-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №516-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

   1) ԷՄՇ կանոնների 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին ենթակետով.

      «16.1) Կարգավարում՝ էլեկտրական էներգիայի արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական

ժամանակում էլեկտրական էներգիայի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի մատակարարումը՝ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ.».

2) ԷՄՇ կանոնների 2-րդ կետի 34.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34.1) Միկրոէներգաարտադրող՝ մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ կայանում, իսկ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը՝ նաև 150 կՎտ-ից մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էներգաարտադրող կայանում էլեկտրական էներգիա արտադրող անձ.».

3) ԷՄՇ կանոնների 14-րդ, 14.1-ին կետերում, 40-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերում «կարգավարական» բառը փոխարինել «Կարգավարման» բառով.

4) ԷՄՇ կանոնների 43-րդ կետի 4-րդ ենթակետում «կարգավարական» բառը փոխարինել «Կարգավարման» բառով, իսկ «մասով» բառից հետո լրացնել «և ՎԷԱ կայանից, միադրույք սակագնային համակարգում գործող ՊԷԱ կայանից բեռնաթափման համակարգային ծառայության ստացման մասով» բառերը.

5) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 44.2-րդ կետով.

«44.2. ՎԷԱ կայանը և միադրույք սակագնային համակարգում գործող ՊԷԱ կայանը Համակարգի օպերատորի Կարգավարման շրջանակում ՀԾՄ-ին մատուցում են բեռնաթափման համակարգային ծառայություն, որի դիմաց վճարվում են ԷՄՇ կանոնների 117.1-ին կետի համաձայն:».

6) ԷՄՇ կանոնների 54.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«54.3. Այն դեպքում, երբ ԷՀՑ կանոնների 151.4-րդ կետի համաձայն ԿԷԱ կայանը, ՊԷԱ կայանը և ՎԷԱ կայանը Համակարգի օպերատորի կողմից ներառվել են Կարգավարման գործընթացում, ապա՝

1) ԿԷԱ կայանի դեպքում՝

ա. հզորությունը նվազեցնելու վերաբերյալ Կարգավարման կարգադրության տրման դեպքում, վերջինիս բացասական անհաշվեկշռույթները զրոյացվում են Շուկայի օպերատորի կողմից՝ Կարգավարման կարգադրության շրջանակում տրված չափաքանակով,

բ. հզորությունն ավելացնելու վերաբերյալ Կարգավարման կարգադրության տրման դեպքում, վերջինիս Կարգավարման կարգադրության շրջանակում տրված չափաքանակով վճարվում է ՀԾՄ-ի կողմից տվյալ ԿԷԱ կայանի համար Հանձնաժողովի սահմանած էլեկտրական էներգիայի սակագնով,

2) ՊԷԱ կայանի դեպքում, բացառությամբ միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի, կողմերը ղեկավարվում են ԷՄՇ կանոնների 54-րդ կետի 3-րդ ենթակետով և 21-րդ գլխով սահմանված կարգավորումներով,

3) ՎԷԱ կայանի և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի դեպքում կողմերը ղեկավարվում են ԷՄՇ կանոնների 117.1-ին կետերով սահմանված կարգավորումներով:».

7) ԷՄՇ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 117.1-ին կետեով.

«117.1. ԷՀՑ կանոնների 151.1-ին կետի համաձայն ՎԷԱ կայանի և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի՝ Համակարգի օպերատորի կողմից Կարգավարման գործընթացում ներառվելու դեպքում՝

1) ԷՀՑ կանոնների 145-րդ կետով սահմանված հուսալիության ցուցանիշի նվազումից և ԷԲՑ կանոնների 127-րդ կետով սահմանված էլեկտրական էներգիայի առաքման դադարեցման (սահմանափակման) տարեկան գումարային տևողությունը գերազանցելուց հետո Կարգավարման կարգադրության շրջանակում մատուցված բեռնաթափման համակարգային ծառայության դիմաց ՎԷԱ կայանը և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանը վճարվում են ՀԾՄ-ի կողմից՝ բեռնաթափման համակարգային ծառայության քանակի և Հանձնաժողովի կողմից տվյալ կայանի համար

սահմանված էլեկտրական էներգիայի սակագնի արտադրյալի չափով, բացառությամբ ԷՀՑ կանոնների 183.15-րդ կետով նախատեսված պարտավորության չկատարման (խախտման) դեպքի, որի պարագայում որևէ վճարում չի կատարվում ՀԾՄ-ի կողմից, ինչպես նաև Երաշխավորված մատակարարի կողմից համապատասխան հաշվարկային ամսվա համար տվյալ կայանին վճարման ենթակա գումարից նվազեցվում է Կարգավարման կարգադրության շրջանակից ավել առաքված էլեկտրական էներգիայի արժեքի չափով գումար, իսկ վերջինս Երաշխավորված մատակարարի կողմից տվյալ կայանին վճարման ենթակա գումարը գերազանցելու դեպքում՝ այն զրոյացվում է,

2) Կարգավարման կարգադրության շրջանակում ՎԷԱ կայանի և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի յուրաքանչյուր ժամում մատուցված բեռնաթափման համակարգային ծառայության քանակը որոշվում է Կարգավարման կարգադրության ժամանակահատվածին նախորդող երեք օրացուցային տարիներից յուրաքանչյուրի նույն ամսվա Կարգավարման կարգադրություն չստացած և էլեկտրական ցանց էլեկտրական էներգիա առաքած նույն ժամերին առաքված էլեկտրական էներգիայի միջին թվաբանական և նախորդող ամենամոտ օրվա Կարգավարման կարգադրություն չստացած և էլեկտրական ցանց էլեկտրական էներգիա առաքած նույն ժամին առաքված էլեկտրական էներգիայի չորս մեծություններից առավելագույն մեծության և Համակարգի օպերատորի կողմից տրված Կարգավարման կարգադրության շրջանակում թույլատրված առաքման տարբերությամբ,

3) Կարգավարման կարգադրության շրջանակում ըստ էլեկտրակայանների, օրերի և ժամերի էլեկտրական ցանց առաքվող էլեկտրական էներգիայի թույլատրված քանակների վերաբերյալ ամսական տեղեկատվությունը տվյալ ամսվան հաջորդող 2 աշխատանքային օրերի ընթացքում Համակարգի օպերատորը ներկայացնում է Շուկայի օպերատորին, իսկ Շուկայի օպերատորը նշված տեղեկատվության և սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված սկզբունքի հիման վրա որոշում է Կարգավարման կարգադրության շրջանակում մատուցված բեռնաթափման

համակարգային ծառայության քանակը, դրա դիմաց վճարման ենթակա գումարը և դրանք հաշվի է առնում ԷՄՇ կանոնների 236-րդ կետով նախատեսված ակտերում,

4) միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի ՊՄԳ-ով սույն կետի 1-3-րդ կետերից տարբերվող այլ կարգավորումներ նախատեսված լինելու դեպքում կիրառվում են այդ կարգավորումները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
__ _____ 2026թ.